ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ, ՈՐՈՆՔ ԽԹԱՆՈՒՄ ԵՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ

Աշակերտների ուսումնական մոտիվացիայի խթանման հարցում կարևոր նշանակություն ունեն այն առաջադրանքներն ու հանձնարարությունները, որոնք կիրառվում են ուսուցչի կողմից դասապրոցեսի ընթացքում կամ հանձնարարվում են տանն անելու համար:

Իսկ ինչպիսի՞ն պետք է լինեն այդ առաջադրանքները սովորողներին մոտիվացնելու համար:

1. Բազմակողմանի:

Առաջադրանքները պետք է օգնեն աշակերտներին զարգացնել տարբեր հմտություններ: Նման առաջադրանքները հաճախ պահանջում են մեծ կարգապահություն, դիվերգենտ մտածողություն և խնդրի ակտիվ լուծում:

2. Դրդող և հասանելի միաժամանակ:

Կարևոր է, որ առաջադրանքը լինի երեխայի հնարավորությունների սահմաններում, չլինի այնքան բարդ, որ վերջինս հրաժարվի այն կատարելուց: Միաժամանակ այն պետք է պարունակի իր մեջ որոշակի մարտահրավեր, բարդություն, որպեսզի երեխային հետաքրքիր լինի իրականացնել այն: Նման առաջադրանքները հաճախ պարունակում են անակնկալ կամ երևակայական պահ:

3. Տարբեր մակարդակների:

Նախորդ կետում նշված սկզբունքից նաև հետևում է, որ առաջադրանքները պետք է համապատասխանեցվեն երեխայի ընդունակություններին ու հնարավորություններին, հետևաբար անհրաժեշտ է ունենալ տարբեր բարդության աստիճանի առաջադրանքներ նույն թեմայի համար:

4. Ակտիվություն պահանջող:

Կարևոր է սովորողներին տրամադրել առաջադրանքներ, որոնք ակտիվ մասնակցելու, հետազոտելու, բազահայտելու, գիտափորձեր անելու հնարավորություն են ընձեռում, որոնք ունեն բազմաթիվ բաց, ստուգման ենթակա հարցեր: Միաժամանակ դրանք պետք է լինեն թեմատիկ և ուսուցողական:

5. Հասկանալի:

Առաջադրանքի էությունն ու հրահանգը հասկանալի պետք է լինի երեխայի համար: Բացի այդ կարևոր է սովորողներին բացատրել առաջադրանքների նպատակն ու այն հմտությունների իրական նշանակությունը, որոնք դրանք զարգացնում են:

6. Հետաքրքիր:

Ուսումնական մոտիվացիան խթանելու նպատակով կարևոր է, որ առաջադրանքները կապված լինեն սովորողների ետաքրքրությունների ու նախասիրությունների հետ: Դա ապահովելու նպատակով, հնարավորության սահմաններում, կարելի է աշակերտներին ընտրելու հնարավորություն տալ:

7. Իրական:

Ստեղծել արդիական մեծ խնդիրներին առնչվող առաջադրանքներ, որոնք թույլ

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

կտան սովորողներին ներգրավվել իրական, ինտելեկտուալ աշխատանքի մեջ:

8. Բազմազան:

Չափազանց կարևոր է դասապրոցեսում ներառել բազմազան, տարաբնույթ առաջադրանքներ, տարբեր ձևաչափեր, անհատական, զույգերով, խմբերով աշխատելու հնարավորություններ և այլն:

8. Մեծը շնչտադրող:

Արդյունավետ առաջադրանքները պետք է կազմվեն այնպես, որ սովորողները հնարավորություն ունենան տեսնելու իրենց հմտությունների աճը (օրինակ՝ առաջադրանքները տալ պարզից բարդ սկզբունքով, բարդ առաջադրանքները բաժանել մասերի և այլն):

9. Լրացուցիչ:

Եթե աշակերտը շուտ է ավարտում առաջադրանքը, կարևոր է նրան տալ այլ հետաքրքիր առաջադրանքներ (օրինակ՝ պատրաստել դասարանի թերթ, առցանց շփում գիտնականի հետ և այլն):

10. Լրացուցիչ:

Եթե աշակերտը շուտ է ավարտում առաջադրանքը, կարևոր է նրան տալ այլ հետաքրքիր առաջադրանքներ (օրինակ՝ պատրաստել դասարանի թերթ, առցանց շփում գիտնականի հետ և այլն):

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: